

Կազմված է 29.07.2021թ.
Բաղկացած է 30 էջից

ՆԱԽԱԳԻԾ
Տպագրված է ընդամենը 3 օրինակ

ՕՐԻՆԱԿ _____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆԱԿՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՐԴԻ 29.07.2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ 09.02.2012թ.
գրանցման թիվ՝ 222.160.68143
հարկ վճարողի հաշվառման համար՝ 02605266
28.07.2017թ. գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
կենտրոնական մարմնի կողմից
«_____»._____.2021թ.

ԹԻՎ 11/24-Լ ՈՐՈՇՄԱՄԲ

ՀՀ պետական ռեգիստրի աշխատակից՝

ՀՀ փաստաբանների պալատի
Խորհրդի նախագահ՝
Արա Զոհրաբյան

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»**

Հ Ի Մ Ն Ա Դ Ր Ա Մ Ի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի Հանրապետություն,
քաղաք Երևան
2021թ.

Լ.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամը (այսուհետ՝ **Հիմնադրամ** կամ **ՀՀ փաստաբանական դպրոց** կամ **Փաստաբանական դպրոց**) կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություն է, որը հետապնդում է գիտական, կրթական և այլ հանրօգուտ նպատակներ:

2. ՀՀ փաստաբանական դպրոցը գործում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության օրենսդրության, սույն կանոնադրության և ՀՀ փաստաբանական դպրոցի գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերի հիման վրա:

3. ՀՀ փաստաբանական դպրոցի իրավական կարգավիճակի, հիմնադրման, կառավարման մարմինների, կանոնադրության, լուծարման, գույքի օգտագործման, ինչպես նաև այլ հարցեր կարգավորվում են «Հիմնադրամների մասին» օրենքով՝ հաշվի առնելով «Փաստաբանության մասին» օրենքով (այսուհետև՝ **Օրենք**) սահմանված առանձնահատկությունները:

4. Այն բոլոր հարցերը, որոնք սույն կանոնադրությամբ չեն կարգավորվել, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

5. ՀՀ փաստաբանական դպրոցը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ **ՀՀ փաստաբանների պալատ** կամ **Հիմնադիր**) կողմից (պետական գրանցման տվյալները՝ վկայական 03 Ա 070122, գրանցման համարը՝ 211.174.03619, 27.10.2005թ., տրված՝ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից, գտնվելու վայրի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Զաքյան փողոց, թիվ 7-2 շենք, փոստային դասիչ՝ 0010):

6. ՀՀ փաստաբանական դպրոցի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամ,

2) հայերեն կրճատ՝ «ՀՀ փաստաբանական դպրոց» հիմնադրամ,

3) ռուսերեն լրիվ՝ **Фонд «Школа адвокатов Республики Армения»**

4) ռուսերեն կրճատ՝ **Фонд «Школа адвокатов РА»**

5) անգլերեն լրիվ՝ **«School of advocates of the Republic of Armenia» foundation**

6) անգլերեն կրճատ՝ **«School of advocates of the RA» foundation**

7. ՀՀ փաստաբանական դպրոցն ունի իր անվանումը պարունակող կլոր կնիք (հայերեն և անգլերեն):

8. ՀՀ փաստաբանական դպրոցի գտնվելու վայրի հասցեն է՝

- *Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Զաքյան փողոց, թիվ 7-3 շենք, իսկ փոստային դասիչը՝ 0010:*

9. ՀՀ փաստաբանական դպրոցի պաշտոնական կայքն է՝ www.advschool.am:

10. ՀՀ փաստաբանական դպրոցի գործունեության ժամկետը չի սահմանափակվում:

II. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

11. ՀՀ փաստաբանական դպրոցի հիմնական նպատակներն են՝

1) ապահովել Փաստաբանական դպրոցի ունկնդիրների որակավորման ուսուցումը և փաստաբանների շարունակական մասնագիտական վերապատրաստումը.

2) ապահովել Փաստաբանական դպրոցի ունկնդիրների համար անցկացվող որակավորման քննությունների անցկացումը.

3) նպաստել Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական ինստիտուտի զարգացմանը, փաստաբանների մասնագիտական կարողությունների կատարելագործմանը և փաստաբանի դերի բարձրացմանը.

4) համալրել Փաստաբանների պալատը մասնագիտորեն պատրաստված անդամներով.

5) նպաստել Փաստաբանական դպրոցի ունկնդիրների գիտակրթական մակարդակի բարձրացմանը.

6) իրականացնել ժամանակակից գիտատեխնիկական և դասավանդման մեթոդների կիրառմամբ կրթական ծրագրեր:

12. Սույն կանոնադրությանը համապատասխան Փաստաբանական դպրոցը կարող է հետապնդել նաև հետևյալ նպատակները՝

1) նպաստել մարդու իրավունքների պաշտպանությանը և ժողովրդավարական ինստիտուտների կայացմանն ու զարգացմանը.

2) բարձրացնել Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակը.

3) նպաստել Հայաստանի Հանրապետության օրենսդրության ուսումնասիրմանը, կատարելագործմանը և համապատասխանեցմանը մարդու իրավունքների և ազատությունների ոլորտի հիմնական կոնվենցիաներին և մյուս միջազգային իրավական փաստաթղթերին.

4) ապահովել Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակումը, Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի համեմատական վերլուծությունների և փորձաքննությունների կատարումը Փաստաբանական դպրոցում.

5) կազմակերպել իրավաբանների միջազգային հավաքներ, կոնֆերանսներ, սեմինարներ, իրականացնել իրավաբանների փոխանակման ծրագրեր.

6) ապահովել արտերկրում գործող փաստաբանական ուսումնական հաստատությունների, իրավաբանական կազմակերպությունների և իրավաբանության բնագավառի գրահրատարակչական կազմակերպությունների հետ կապը և համագործակցությունը.

7) աջակցել Հայաստանում իրավաբանության ոլորտի գրահրատարակչության զարգացմանը, իրավաբանական գիտական աշխատությունների, ինչպես նաև իրավաբանական գրականության հրատարակմանը և տարածմանը.

8) նպաստել Հայաստանի և սփյուռքի հայ փաստաբանների, փաստաբանական կազմակերպությունների և իրավաբանական ուղղվածություն ունեցող ուսումնական հաստատությունների միջև կապերի հաստատմանը և համագործակցությանը.

9) նպաստել հայկական փաստաբանության պատմաիրավագիտական արժեքների պահպանմանը, ուսումնասիրմանը և տարածմանը.

10) նպաստել բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը՝ բնակչության շրջանում օրենքների և իրավական գիտելիքների քարոզչության միջոցով.

11) օժանդակել իրավաբանական բուհերում և բուհերի իրավաբանական ֆակուլտետներում ուսումնառության գործընթացի արդյունավետ կազմակերպմանը.

12) նպաստել Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում և այլ կրթական հաստատություններում իրավական գիտելիքների տարածմանը.

13) նպաստել Փաստաբանական դպրոցի ունկնդիրների և փաստաբանների ոչ մասնագիտական շփումներին, կազմակերպել ոչ պաշտոնական ակումբային հանդիպումներ, ինչպես նաև տարաբնույթ մշակութային և ժամանցային միջոցառումներ:

III. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

13. ՀՀ փաստաբանական դպրոցը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացմանը:

14. ՀՀ փաստաբանական դպրոցը ձեռնարկատիրական գործունեությունը կարող է իրականացնել անձամբ կամ այդ նպատակով ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:

15. ՀՀ փաստաբանական դպրոցը կարող է անձամբ իրականացնել միայն ձեռնարկատիրական գործունեության ստորն նշված տեսակները՝

1) կազմակերպել և իրականացնել ուսումնական ծրագրեր, այդ թվում՝ ունկնդիրների ուսուցումը ու փաստաբանների վերապատրաստումը.

2) կազմակերպել և անցկացնել սեմինարներ, գիտաժողովներ, կլոր սեղաններ և նմանատիպ այլ միջոցառումներ.

3) իրականացնել փորձագիտական (հետազոտական) ծառայություններ.

4) մշակել իրավական ակտերի նախագծեր.

5) իրականացնել օրենքների և նորմատիվ իրավական ակտերի ոչ պաշտոնական հրատարակում, բազմացում կամ պաշտոնական վերահրատարակում.

6) իրականացնել իրավաբանական մասնագիտական գրքերի, ամսագրերի, թերթերի և այլ պարբերականների մեծածախ և մանրածախ առևտուր, ինչպես նաև դրանց հրատարակություն.

7) տրամադրել գույքը վարձակալության.

8) իրականացնել հանրային սննդի կազմակերպում:

IV. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ

16. ՀՀ փաստաբանական դպրոցի փաստացի շահառուներն են՝

1) ՀՀ փաստաբանների պալատի անդամ փաստաբանները և օտարերկրյա փաստաբանները.

2) ունկնդիրները.

3) ՀՀ փաստաբանների պալատը:

17. ՀՀ փաստաբանական դպրոցի հնարավոր շահառուներն են՝ փաստաբանների օգնականները, փաստաբանական գրասենյակների

կառավարիչները, իրավաբանները, իրավաբանական ֆակուլտետների ուսանողները և ՀՀ փաստաբանական դպրոցի գործունեությանն առնչվող այլ անձինք:

V. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

18. ՀՀ փաստաբանական դպրոցը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Պետական գրանցման պահից ՀՀ փաստաբանական դպրոցը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

19. ՀՀ փաստաբանական դպրոցն իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք բերելու պահից ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ:

20. ՀՀ փաստաբանական դպրոցն իրավունք ունի՝

1) անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.

3) ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ.

4) ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից.

5) իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ.

6) կազմակերպել գիտաժողովներ, կլոր սեղաններ և այլ տիպի քննարկումներ ու միջոցառումներ՝ կապված մարդու իրավունքների և ազատությունների, ինչպես նաև սահմանադրական ինստիտուտների պաշտպանության հետ.

7) կազմակերպել մարզամշակութային հավաքներ, ճամբարներ և այլ միջոցառումներ.

8) իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:

21. ՀՀ փաստաբանական դպրոցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին:

22. ՀՀ փաստաբանական դպրոցը կարող է համագործակցել ինչպես Հայաստանի Հանրապետությունում պետական և ոչ պետական մարմինների, կազմակերպությունների և հաստատությունների, այնպես էլ արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների, ընկերությունների և ուսումնական հաստատությունների հետ:

23. Փաստաբանական դպրոցն ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները:

VI. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

24. ՀՀ փաստաբանական դպրոցը պարտավոր է՝

1) գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Օրենքին, «Հիմնադրամների մասին» օրենքին և այլ օրենքներին, սույն կանոնադրությանը, ինչպես նաև ՀՀ փաստաբանական դպրոցի գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերին համապատասխան.

2) «Հիմնադրամների մասին» օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում.

3) «Հիմնադրամների մասին» օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին:

25. ՀՀ փաստաբանների պալատը պատասխանատվություն չի կրում ՀՀ փաստաբանական դպրոցի պարտավորությունների համար, իսկ ՀՀ փաստաբանական դպրոցը պատասխանատվություն չի կրում ՀՀ փաստաբանների պալատի պարտավորությունների համար:

26. ՀՀ փաստաբանական դպրոցն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:

VII. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

27. ՀՀ փաստաբանական դպրոցն իր գործունեությունն իրականացնում է մարմինների միջոցով:

28. ՀՀ փաստաբանական դպրոցի մարմիններն են՝

1) հոգաբարձուների խորհուրդը՝ ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**).

2) ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը (**այսուհետ նաև՝ Տնօրեն**):

VIII. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

29. ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման բարձրագույն մարմինը Խորհուրդն է:

30. Խորհուրդն իրականացնում է ՀՀ փաստաբանական դպրոցի ընդհանուր կառավարումը և ընթացիկ գործունեության վերահսկողությունը:

31. Խորհուրդը բաղկացած է **6 (վեց) անդամից**: Խորհուրդը կազմավորվում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահից և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից սույն կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակված չորս անդամից և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության մեկ ներկայացուցչից:

32. Խորհրդի նախագահն ի պաշտոնե ՀՀ փաստաբանների պալատի նախագահն է:

33. Խորհրդի **չորս անդամներին** նշանակում է ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջադրմամբ՝ **երեք տարի ժամկետով**: Սույն կետում նշված չորս անդամներից առնվազն երեքը պետք է լինեն ՀՀ փաստաբաններ: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցչի թեկնածությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի

կողմից:

34. Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվելու դեպքում այդ անդամի փոխարեն նշանակվում է նոր անդամ սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով:

35. Խորհրդի նիստերը կարող են լինել հերթական կամ արտահերթ:

36. Խորհրդի հերթական նիստերը հրավիրվում են Խորհրդի նախագահի կողմից՝ հաստատված օրակարգով, ըստ անհրաժեշտության, բայց տարեկան չորս անգամից ոչ պակաս:

37. Խորհրդի անդամները և ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը Խորհրդի նիստի օրակարգի, նրա աշխատանքը սկսվելու տեղի, օրվա ու ժամի մասին ստանում են առձեռն կամ փոստով (պատվիրված նամակով կամ էլեկտրոնային փոստով) գրավոր ծանուցում՝ նիստի անցկացումից առնվազն 3 (երեք) օր առաջ:

38. Խորհրդի արտահերթ նիստերը կարող են գումարվել Խորհրդի առնվազն երկու անդամների կամ տնօրենի գրավոր պահանջով, որը ներկայացվում է Խորհրդի նախագահին: Խորհրդի արտահերթ նիստ հրավիրելու պահանջում նշվում են օրակարգի հարցերը և դրանց քննարկման անհրաժեշտության հիմնավորումը: Խորհրդի նախագահը, ստանալով սույն կետով նախատեսված արտահերթ նիստ հրավիրելու պահանջը, պարտավոր է 30 (երեսուն) օրվա ընթացքում հրավիրել Խորհրդի արտահերթ նիստ՝ պահանջում նշված օրակարգով: Նշված ժամկետում Խորհրդի նախագահի կողմից արտահերթ նիստ չգումարելու դեպքում Խորհրդի արտահերթ նիստ կարող է գումարվել պահանջ ներկայացրած անձանց կողմից՝ նույն օրակարգով:

39. Սույն կանոնադրության 38-րդ կետով նախատեսված Խորհրդի արտահերթ նիստ հրավիրելու դեպքում հրավիրողները սույն կանոնադրության 37-րդ կետով սահմանված կարգով Խորհրդի բոլոր անդամներին են ուղարկում Խորհրդի նախագահին հրավիրողների կողմից ուղղված պահանջի պատճենը և մեկ փաստաթղթի տեսքով բոլոր հրավիրողների կողմից ստորագրված ծանուցումը՝ ոչ ուշ, քան այդ նիստի անցկացման օրվանից 7 (յոթ) օր առաջ, որտեղ պարտադիր պետք է նշված լինի Խորհրդի արտահերթ նիստի օրակարգը, անցկացման տեղը, օրը ու ժամը: Սույն պահանջի հիմքով Խորհրդի նիստում քվորումի բացակայությամբ նիստ չկայանալու դեպքում պահանջի օրակարգով հարցերն ընդգրկվում են, քննարկվում և դրանց վերաբերյալ որոշում է կայացվում Խորհրդի արտահերթ նիստին անմիջապես հաջորդող նիստում:

40. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է Խորհրդի անդամների կողմից նիստերին անձամբ մասնակցելու միջոցով: ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենն իրավունք ունի մասնակցել Խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

41. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե հրավիրվել է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և նիստին մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը խորհրդի մեկ անդամից մյուսին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) չի թույլատրվում:

42. Խորհուրդն իրավունք չունի շեղվել օրակարգից: Խորհուրդը կարող է հետաձգել օրակարգում ընդգրկված կոնկրետ հարցի քննարկումը՝ հարցի

քննարկման հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու կամ Խորհրդի անդամների կողմից կատարված դիտողությունները պարզաբանելու նպատակով:

43. Խորհրդի նիստը, որպես կանոն, անցկացվում է օրակարգի հարցի հետ անմիջապես առնչություն ունեցող անձի (**սույն կետի իմաստով՝ շահագրգիռ անձ**) մասնակցությամբ, եթե ՀՀ փաստաբանական դպրոցի իրավական ակտերով նախատեսված է շահագրգիռ անձի մասնակցությունը, կամ Խորհրդի նախագահը անհրաժեշտ է համարել հրավիրել շահագրգիռ անձին: Սույն կետում նշված շահագրգիռ անձի բացակայությունն արգելք չէ Խորհրդի նիստն անցկացնելու և որոշում ընդունելու համար: Բացի Խորհրդի անդամներից, տնօրենից և շահագրգիռ անձից, այլ անձինք իրավասու չեն ներկա գտնվել Խորհրդի նիստին, բացառությամբ Խորհրդի նախագահի թույլատրած դեպքերի: Խորհրդի նախագահն իրավունք ունի հարցերի քննարկմանը ներգրավել ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատակազմի անդամներին կամ այլ մասնագետներին կամ թույլ տալ նիստին ներկա գտնվել այլ անձանց (այդ թվում՝ լրագրողների):

44. Յուրաքանչյուր քվեարկությունից առաջ Խորհրդի նախագահը կրկնում է քվեարկության դրվող հարցը ճշգրիտ ձևակերպմամբ, հաշվում և բարձրաձայն հայտարարում է կողմ քվեարկած ձայների թիվը, այնուհետև նույն կարգով հաշվում է դեմ ու ձեռնպահ ձայների թիվը: Խորհրդի նախագահը օրակարգի հարցը քննարկելուց հետո կարող է քվեարկությունը կազմակերպել դռնփակ՝ միայն Խորհրդի անդամների և տնօրենի մասնակցությամբ: Տնօրենի խորհրդակցական ձայնը չի հաշվարկվում խորհրդի անդամների ձայների հետ:

45. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, եթե Հայաստանի Հանրապետության օրենքներով և սույն կանոնադրությամբ այլ կարգ նախատեսված չէ:

46. ՀՀ փաստաբանական դպրոցի անվանման փոփոխության, սույն կանոնադրության 73-րդ կետի 1-ին և 2-րդ կետերում նշված դեպքերի հետ կապված հարցերը լուծվում են Խորհրդի անդամների երկու երրորդի որոշմամբ: ՀՀ փաստաբանական դպրոցի լուծարման, ինչպես նաև սույն կանոնադրության 73-րդ կետի 4-րդ կետում նշված դեպքի հետ կապված հարցերը լուծվում են Խորհրդի վեց անդամի միաձայն որոշմամբ:

47. Եթե Խորհրդի նիստում քննարկվում է Խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի կարող մասնակցել: Սույն կետում նշված դեպքում Խորհրդի անդամը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել: Խորհրդի անդամին բացարկ կարող է հայտնել Խորհրդի մեկ այլ անդամը (այդ թվում՝ Խորհրդի նախագահը), տնօրենը կամ սույն կանոնադրության 43-րդ կետում նշված շահագրգիռ անձը: Խորհրդի անդամի բացարկի հարցը քննարկում է Խորհուրդը՝ բացարկված Խորհրդի անդամի բացակայությամբ:

48. Քվեարկության արդյունքներն արտացոլվում են Խորհրդի նիստի արձանագրության մեջ: Խորհրդի նիստերն արձանագրվում են պարզ, թղթային եղանակով՝ հայերենով:

49. Արձանագրության մեջ նշվում են՝

- 1) նիստի գումարման օրը, ամիսը, տարեթիվը և վայրը.
- 2) նիստին մասնակցելու իրավունք ունեցող անձանց քանակը.
- 3) նիստին մասնակցած անձանց քանակը, անունները:

- 4) նիստի օրակարգը.
- 5) նիստում կայացած ելույթների հիմնական դրույթները.
- 6) քվեարկության դրված հարցերը և այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները.
- 7) նիստի ընդունած որոշումները:

50. Արձանագրությունը ստորագրում են Խորհրդի նախագահը և տվյալ նիստի քարտուղարը: Խորհրդի նիստի քարտուղարին նշանակում է Խորհրդի նախագահը՝ ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատակազմից: ՀՀ փաստաբանական դպրոցը կարող է ձայնագրել կամ տեսաձայնագրել Խորհրդի նիստերը:

51. Խորհրդի նիստերի արձանագրություններից քաղվածքները կազմվում են «Հիմնադրամների մասին» օրենքով սահմանված կարգով:

52. Խորհրդի նիստի արդյունքում առանձին ակտի ձևով ընդունված որոշումներն ստորագրում է Խորհրդի նախագահը: Առանձին ակտի ձևով ընդունված որոշումներն երրորդ անձանց ներկայացվելու դեպքում պետք է բովանդակեն նաև քաղվածքների համար «Հիմնադրամների մասին» օրենքով սահմանված տեղեկությունները:

53. Խորհուրդը կարող է նիստերն անցկացնել նաև հեռակա (հարցման) կարգով: Խորհրդի հեռակա նիստն անցկացվում և ամփոփվում է հետևյալ կերպ՝

1) Խորհրդի նախագահը էլեկտրոնային փոստով Խորհրդի անդամներին է ուղարկում նիստի օրակարգի հարցերը, հարցերի քվեարկության ամփոփման օրվա (ժամի) և դիրքորոշումն ուղարկելու ժամկետի մասին տեղեկություն (որը չի կարող երկու աշխատանքային օրից պակաս լինել), ինչպես նաև ընդունվող որոշման նախագիծը.

2) Խորհրդի անդամներն օրակարգում ընդգրկված հարցերով որոշումների նախագծերի վերաբերյալ իրենց դիրքորոշումը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկում են Խորհրդի նախագահին և Խորհրդի մյուս անդամներին.

3) Հարցերի քվեարկության ամփոփման համար հայտարարված օրվա համապատասխան ժամին, Խորհրդի նախագահը ամփոփում է Խորհրդի անդամների կողմից ուղարկված դիրքորոշումները.

54. Հեռակա (հարցման) կարգով Խորհրդի նիստի ամփոփման վերաբերյալ Խորհրդի նախագահը կայացնում է որոշում:

55. Հեռակա (հարցման) կարգով չի կարող անցկացվել սույն կանոնադրության 57-րդ կետի 1-ին, 6-րդ, 7-րդ, 9-րդ և 10-րդ ենթակետերում նշված հարցերի քննարկման անհրաժեշտությամբ պայմանավորված խորհրդի նիստերը:

Խորհրդի, Խորհրդի նախագահի և անդամների իրավասությունները և դրանց դադարման կարգը

56. Խորհրդի իրավասությունները սահմանվում են Օրենքով, «Հիմնադրամների մասին» օրենքով և սույն կանոնադրությամբ:

57. Խորհուրդը՝

1) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենին՝ Խորհրդի նախագահի առաջարկությամբ.

2) հաստատում է ունկնդիրների ուսման վարձի չափը, դրա վճարման կարգը և ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատանքային ներքին կանոնակարգերը,

ռազմավարական ծրագիրը, և աշխատակազմի հաստիքացուցակը.

3) հաստատում է ընդունելության քննությունների կազմակերպման և անցկացման կարգը (**այսուհետ՝ Ընդունելության քննությունների կազմակերպման և անցկացման կարգ**).

4) հաստատում է ուսուցման կազմակերպման ընթացակարգը (**այսուհետ՝ Ուսուցման կազմակերպման ընթացակարգ**).

5) հաստատում է ունկնդիրների վարքագծի կարգապահական կանոնները.

6) հաստատում է ՀՀ փաստաբանական դպրոցի տարեկան բյուջեն՝ փաստաբանական դպրոցի տնօրենի ներկայացմամբ.

7) սույն կանոնադրությամբ սահմանված պարբերականությամբ լսում է փաստաբանական դպրոցի տնօրենի հաշվետվությունները.

8) ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի հաստատած ուղենիշներին համապատասխան՝ հաստատում է փաստաբանների վերապատրաստման և հավակնորդների ուսուցման ծրագրերը.

9) ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի ներկայացմամբ քննարկում և լուծում է ունկնդրի հեռացման հարցը.

10) անվավեր է ճանաչում, վերացնում կամ կասեցնում է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի ընդունած անհատական կամ ներքին իրավական ակտերը.

11) քննարկում է Ընդունելության քննությունների կազմակերպման և անցկացման կարգով սահմանված իրեն վերապահված հարցերը և ընդունում համապատասխան որոշում.

12) ստեղծում է տնտեսական ընկերություններ կամ որոշում է ընդունում տնտեսական ընկերություններում մասնակցության մասին, ինչպես նաև ստեղծում է առանձնացված ստորաբաժանումներ և հիմնարկներ ու ընդունում է դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումներ.

13) ընտրում է ՀՀ փաստաբանական դպրոցի աուդիտ իրականացնող անձին (աուդիտորին).

14) իրականացնում է Օրենքով, «Հիմնադրամների մասին» օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև ՀՀ փաստաբանական դպրոցի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

58. Խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

59. Խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

1) առաջարկություններ ներկայացնել Խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.

2) նախապատրաստել և Խորհրդի քննարկմանը ներկայացնել հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր.

3) ստանալու տեղեկություններ ՀՀ փաստաբանական դպրոցի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ.

4) դուրս գալ ՀՀ փաստաբանական դպրոցի խորհրդի անդամությունից.

5) իրականացնել Օրենքով, «Հիմնադրամների մասին» օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

60. Խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության:

61. Խորհրդի անդամները պարտավոր են՝

1) անձամբ մասնակցել Խորհրդի նիստերին.

2) իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով ՀՀ փաստաբանական դպրոցի շահերից:

62. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.

2) անհրաժեշտության դեպքում կազմավորում է Խորհրդի ժամանակավոր հանձնախմբեր.

3) գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.

4) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.

5) ստորագրում է Խորհրդի որոշումները.

6) Խորհրդի անդամների կազմից նշանակում է Խորհրդի փոխնախագահ.

7) Խորհրդի նիստին մասնակցելու համար ըստ անհրաժեշտության հրավիրում է մասնագետներ կամ շահագրգիռ անձանց.

8) իրականացնում է Օրենքով, «Հիմնադրամների մասին» օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

63. Խորհրդի նախագահի լիազորությունները դադարեցվում են ՀՀ փաստաբանների պալատի նախագահի լիազորությունները դադարեցվելու պահից:

64. Խորհրդի նախագահի լիազորությունները դադարեցվելու դեպքում լիազորությունները ստանձնում է ՀՀ փաստաբանների պալատի նոր նախագահը, իսկ նոր նախագահ չընտրվելու դեպքում՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարը:

65. Խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝

1) Խորհրդի նախագահին տրված գրավոր դիմումի հիման վրա.

2) նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ նրա կողմից անհարգելի պատճառով մեկ տարվա ընթացքում ՀՀ փաստաբանական դպրոցի խորհրդի չորս նիստերին բացակայելու դեպքում՝ ՀՀ փաստաբանական դպրոցի խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում.

4) նրա մահվան դեպքում.

5) լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում.

6) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

66. Փաստաբանական դպրոցի խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է նախկին անդամի նշանակման կարգով, ոչ ուշ, քան ՀՀ փաստաբանական դպրոցի խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի ծանուցումն ստանալու օրվանից հետո՝ 30 (երեսուն) օրվա ընթացքում:

67. Խորհրդի անդամի լիազորությունները համարվում են դադարած՝

1) Խորհրդի նախագահին տրված գրավոր դիմումի հիման դիմումը ներկայացնելու հաջորդ օրվանից.

2) նրա մահվան դեպքում՝ մահվան օրվանից.

3) լիազորությունների ժամկետի ավարտման օրվանից:

68. ՀՀ փաստաբանական դպրոցի խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում Փաստաբանական դպրոցի տնօրենը տեղեկացնում է Փաստաբանների պալատի

խորհրդին:

IX. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԸ

69. ՀՀ փաստաբանական դպրոցի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը:

70. ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենին սույն կանոնադրությամբ սահմանված կարգով պաշտոնի է նշանակում Խորհուրդը՝ Խորհրդի նախագահի առաջարկությամբ՝ Խորհրդի անդամների ընդհանուր թվի մեծամասնությամբ:

71. ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն կարող է լինել միայն փաստաբանի կարգավիճակ ունեցող անձը:

72. Խորհրդի կողմից Խորհրդի նախագահի առաջադրված տնօրենի թեկնածությունը չընդունվելու դեպքում Խորհրդի նախագահը քսան օրվա ընթացքում առաջադրում է այլ թեկնածու:

73. ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը Խորհրդի նախագահի ներկայացմամբ պաշտոնից կարող է ազատվել Խորհրդի որոշմամբ, եթե՝

1) առկա են աշխատանքային պայմանագրով նախատեսված հիմքերը.

2) սույն կանոնադրությամբ սահմանված պարբերականությամբ Խորհրդին անհարգելի պատճառներով հաշվետվությունը չներկայացնելու վերաբերյալ Խորհրդի նախագահի գրավոր իրազեկումն ստանալու պահից տասն օրում չի ներկայացրել հաշվետվությունը.

3) դադարեցվել է տնօրենի փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը.

4) չի ապահովում ՀՀ փաստաբանական դպրոցի արդյունավետ գործունեությունը և Խորհրդի նախագահի գրավոր պահանջի հիման վրա 30 (երեսուն) օրվա ընթացքում չի կատարել գրավոր պահանջում նշված միջոցառումները:

74. Խորհրդի նախագահի ներկայացմամբ Խորհրդի վեց անդամի միաձայն որոշմամբ Խորհուրդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել Տնօրենի հետ կնքված պայմանագիրը:

75. ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի հետ աշխատանքային պայմանագիրը ստորագրում է Խորհրդի նախագահը:

ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի լիազորությունները

76. ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի լիազորությունները սահմանվում են Օրենքով, «Հիմնադրամների մասին» օրենքով, սույն կանոնադրությամբ, Խորհրդի ընդունած իրավական ակտերով և նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրով:

77. Տնօրենի իրավասությանն են պատկանում ՀՀ փաստաբանական դպրոցի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը:

78. ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը՝

1) ղեկավարում է ուսման գործընթացը.

2) ձևավորում է ընդունելության հանձնաժողովը.

3) հաստատում է ընդունելության հանձնաժողովի գործունեության կարգը.

- 4) դասախոսների հետ կնքում է համապատասխան պայմանագրեր.
 - 5) հաստատում է ընդունելության համար անհրաժեշտ թեստերը, խնդիրները և այլ անհրաժեշտ նյութերը.
 - 6) հաստատում է դասընթացների ծրագրերը, ամփոփում է փորձաշրջանի արդյունքները.
 - 7) Ունկնդիրների բողոքների հիման վրա վերանայում է դասախոսների, ինչպես նաև բողոքարկման և փորձաշրջանի հանձնաժողովների գնահատումները.
 - 8) ուսուցման գործընթացի արդյունավետությամբ պայմանավորված և կազմակերպման առանձնահատկություններից ելնելով Ուսուցման կազմակերպման ընթացակարգին համապատասխան փոփոխություններ է կատարում ուսումնական պլանում.
 - 9) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում ՀՀ փաստաբանական դպրոցի ուսումնական ծրագրերը.
 - 10) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ունկնդրին ենթարկում է կարգապահական պատասխանատվության.
 - 11) կազմակերպում է Խորհրդի որոշումների կատարումը.
 - 12) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է փաստաբանական դպրոցի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում ՀՀ փաստաբանական դպրոցի անունից.
 - 13) բանկերում բացում է ՀՀ փաստաբանական դպրոցի հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.
 - 14) ներկայացնում է ՀՀ փաստաբանական դպրոցը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.
 - 15) ՀՀ փաստաբանական դպրոցի անունից գործում է առանց լիազորագրի և տալիս է լիազորագրեր.
 - 16) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատանքային ներքին կանոնակարգերը և հաստիքացուցակը.
 - 17) իր իրավասության սահմաններում արձակում (ընդունում) է հրամաններ, հրահանգներ, որոշումներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
 - 18) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատակիցներին.
 - 19) սահմանում է ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատակազմի աշխատողների ծառայողական լիազորությունների շրջանակը.
 - 20) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
 - 21) ընդունում է Խորհրդի իրավասությանը չվերապահված ՀՀ փաստաբանական դպրոցի բնականոն գործունեությունն ապահովող ներքին իրավական ակտեր.
 - 22) խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է Խորհրդի նիստերին, ինչպես նաև սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ներկայացնում է խորհրդի նիստ հրավիրելու պահանջ.
 - 23) իրականացնում է սույն օրենքով և փաստաբանական դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:
79. ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենն իր բացակայության ժամանակ իր պարտականությունների կատարումը իր կողմից ընդունված անհատական կամ

ներքին իրավական ակտով վերապահում է Տնօրենի տեղակալին: ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի հրամանով տնօրենի որոշ լիազորություններ կարող են վերապահվել տնօրենի տեղակալին:

80. ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենն այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Խորհրդի համաձայնությամբ: ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը կարող է իրականացնել փաստաբանական գործունեություն:

81. ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի կողմից այլ կազմակերպությունում աշխատելը կամ փաստաբանական գործունեություն իրականացնելը չպետք է խոչընդոտի ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի պարտականությունների կատարմանը:

ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի հաշվետվությունները և պարբերականությունը

82. ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը յուրաքանչյուր տարվա համար Խորհրդին է ներկայացնում երեք տեսակի հաշվետվություններ

- 1) ընդհանուր ֆինանսական հաշվետվություն,
- 2) ուսումնական գործընթացի կազմակերպման հաշվետվություն,
- 3) վերապատրաստման գործընթացի կազմակերպման հաշվետվություն:

83. Յուրաքանչյուր տարվա համար ընդհանուր ֆինանսական հաշվետվությունը տնօրենը ներկայացնում է ֆինանսական տարվա ավարտից հետո՝ երեք ամսվա ընթացքում, որը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

- 1) մուտքերը,
- 2) ծախսերը,
- 3) կատարված ծախսերի համեմատությունները հաստատված բյուջեի հետ և շեղումների դեպքում՝ դրանց պարզաբանումները,
- 4) նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գործարքների ցանկը և բնույթը,
- 5) Խորհրդի սահմանած այլ տեղեկություններ:

84. Յուրաքանչյուր տարվա համար ուսումնական գործընթացի կազմակերպման հաշվետվությունը Տնօրենը ներկայացնում է տարվա ավարտից հետո՝ երեք ամսվա ընթացքում: Տարվա հաշվարկի համար, որպես առաջին օր, հիմք է ընդունվում տվյալ տարվա առաջին հոսքի դասընթացի առաջին օրը: Սույն կետում նշված հաշվետվության բովանդակությունը սահմանում է Խորհուրդը:

85. Յուրաքանչյուր տարվա համար վերապատրաստման գործընթացի կազմակերպման հաշվետվությունը Տնօրենը ներկայացնում է ֆինանսական տարվա ավարտից հետո՝ երեք ամսվա ընթացքում: Սույն կետում նշված հաշվետվության բովանդակությունը սահմանում է Խորհուրդը:

X. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՆԿՆԴՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

86. ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդրի (այսուհետ՝ ունկնդիր) կարգավիճակին կարող է հավակնել այն գործունակ ֆիզիկական անձը (դիմորդը),

ով ունի իրավաբանական կրթության բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան՝ բացառությամբ, երբ նա դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ:

87. Ունկնդիրների քանակական կազմը, ինչպես նաև ընդունելության քննությունների անցողիկ միավորների նվազագույն շեմը յուրաքանչյուր (այդ թվում՝ հեռավար) հոսքի ընդունելության քննության համար սահմանում է Խորհուրդը՝ Տնօրենի ներկայացմամբ: Խորհուրդը ընդունելության քննությունները կազմակերպում է ըստ մասնագիտական ուղղվածության:

88. ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության գործընթացը, այդ թվում՝ ընդունելության քննությունները, կազմակերպում և անցկացնում է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը՝ ձևավորելով ժամանակավոր հանձնաժողով (**այսուհետ՝ Հանձնաժողով**): Հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե հանդիսանում է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը:

89. ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության քննությունների կազմակերպման և անցկացման կարգը սահմանում է Խորհուրդը:

90. Սույն կանոնադրության 86-րդ կետով նախատեսված անձն ունկնդրի կարգավիճակ է ձեռք բերում (համարվում է ՀՀ փաստաբանական դպրոցն ընդունված), եթե՝

1) հաջողությամբ հաղթահարել է ընդունելության քննության գրավոր փուլը, այն է՝ թեսթի լուծման արդյունքներով ստացել է Խորհրդի կողմից սահմանված անցողիկ նվազագույն միավորները և ընդգրկվել է Խորհրդի կողմից սահմանված անցողիկ տեղերի քանակական կազմում (ստացել է մրցութային անհրաժեշտ միավորներ), և

2) հաջողությամբ հաղթահարել է ընդունելության քննության բանավոր փուլը, այն է՝ հարցազրույցի արդյունքում ստացել է Խորհրդի կողմից սահմանված անցողիկ միավորներ, և

3) ՀՀ փաստաբանական դպրոցի հետ կնքել է համապատասխան պայմանագիր: Եթե ընդունելության քննության գրավոր փուլի անցողիկ վերջին տեղին հավակնում են հավասար միավորներ ստացած մեկից ավելի դիմորդներ, ապա բոլոր այդ դիմորդները ձեռք են բերում բանավոր փուլին մասնակցելու իրավունք:

91. Առնվազն տասը տարվա փաստաբանի, քննիչի, դատախազի կամ դատավորի աշխատանքային (մասնագիտական) ստաժ կամ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան և հինգ տարվա իրավաբանի աշխատանքային (մասնագիտական) ստաժ կամ բարձրագույն մասնագիտական իրավաբանական կրթության ոլորտում առնվազն տաս տարվա գիտամանկավարժական գործունեության ստաժ ունեցող դիմորդը (**այսուհետ՝ Հատուկ դիմորդ**) կարող է ունկնդրի կարգավիճակ ստանալ, եթե՝

1) հաղթահարել է ընդունելության քննությունների բանավոր փուլը՝ Խորհրդի կողմից սահմանված Հատուկ դիմորդների՝ տվյալ ընդունելության հոսքի առավելագույն սահմանաքանակի շրջանակում, և

2) ՀՀ փաստաբանական դպրոցի հետ կնքել է համապատասխան պայմանագիր:

92. Ընդունելության քննության գրավոր և բանավոր փուլերը հաղթահարած հավակնորդները, ինչպես նաև ընդունելության քննության բանավոր փուլը հաղթահարած հատուկ դիմորդները պարտավոր են ՀՀ փաստաբանական դպրոցի հետ կնքել ՀՀ փաստաբանական դպրոցում ուսուցումը անցնելու (ուսումնառության) վերաբերյալ պայմանագրեր՝ ՀՀ փաստաբանական դպրոցի

սահմանած ժամկետում:

ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդրի իրավունքները և պարտականությունները

93. ՀՀ փաստաբանական դպրոցում ուսուցում անցնող ունկնդիրն իրավունք ունի՝

1) օգտվելու ՀՀ փաստաբանական դպրոցի գրադարանից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական և այլ ստորաբաժանումների ծառայություններից (առկայության դեպքում).

2) ըստ նախասիրությունների՝ մասնակցելու ՀՀ փաստաբանական դպրոցում անցկացվող գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին.

3) Խորհրդի կողմից սահմանված դեպքում օգտվելու ուսման վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից.

4) ծանոթանալու ՀՀ փաստաբանական դպրոցի կանոնադրությանը և ՀՀ փաստաբանական դպրոցի գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերին:

ՀՀ փաստաբանական դպրոցում ուսուցում անցնող ունկնդիրն ունի նաև Օրենքով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև ՀՀ փաստաբանական դպրոցի գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

94. Ունկնդիրը պարտավոր է՝

1) հաճախել ՀՀ փաստաբանական դպրոցում կազմակերպվող դասընթացներին.

2) մասնակցել գործնական ուսուցմանը (փորձաշրջանին).

3) դրսևորել բարեկիրթ վարքագիծ.

4) կատարել ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատակազմի և դասախոսների ուսումնական բնույթի հանձնարարությունները.

5) սահմանված ժամկետում վճարել ուսման վարձը.

6) իմանալու պահից մեկ ամսվա ընթացքում տեղեկացնել ՀՀ փաստաբանական դպրոցին՝ սույն կանոնադրության 86-րդ կետում նշված ունկնդրի կարգավիճակի հետ անհամատեղելի հատկանիշների մասին.

7) խնամքով վերաբերվել ՀՀ փաստաբանական դպրոցի գույքին, իսկ գույքը վնասելու, օգտագործման համար ոչ պիտանի դարձնելու կամ ոչնչացնելու դեպքում՝ հատուցել պատճառված վնասն ամբողջությամբ.

8) պահպանել ՀՀ փաստաբանական դպրոցի կանոնադրության և ներքին իրավական այլ ակտերի պահանջները.

9) կատարել ՀՀ փաստաբանական դպրոցի խորհրդի և տնօրենի որոշումների պահանջները.

10) սահմանված ժամկետներում կատարել իրեն տրված բոլոր ուսումնական առաջադրանքները.

11) բարձր պահել ՀՀ փաստաբանական դպրոցի բարի համբավը:

XI. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

95. Ունկնդիրն ենթակա է կարգապահական պատասխանատվության

Օրենքի, սույն կանոնադրության և/կամ ՀՀ փաստաբանական դպրոցի (խորհրդի և/կամ տնօրենի) իրավական ակտերի պահանջները խախտելու դեպքերում:

96. Ունկնդրի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգը սահմանվում է Օրենքով և սույն կանոնադրությամբ:

97. ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդրին կարգապահական պատասխանատվության ենթարկելն իրականացվում է երեք փուլերով.

1) կարգապահական վարույթի հարուցում (**կարգապահական վարույթի սկիզբ**),

2) վարույթի իրականացում (**պարզվում են այն հանգամանքները, որոնք առիթ կամ հիմք են ծառայել կարգապահական վարույթ հարուցելու համար**). այս փուլում, որպես կանոն, ունկնդրից պահանջվում է բացատրություններ,

3) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի որոշում (**կարգապահական վարույթի ավարտ**), այս փուլում լուծվում է ունկնդրի նկատմամբ կարգապահական տույժի միջոց կիրառելու կամ չկիրառելու հարցը:

98. Ունկնդրից, ըստ անհրաժեշտության, կարող է պահանջվել գրավոր բացատրություն նախքան կարգապահական վարույթ հարուցելը:

99. Այն ունկնդիրները, որոնք կխախտեն Օրենքի, ՀՀ փաստաբանական դպրոցի կանոնադրության կամ ՀՀ փաստաբանական դպրոցի իրավական ակտերի պահանջները, ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի (տնօրենի տեղակալի) հրամանով կարող են ենթարկվել կարգապահական պատասխանատվության, իսկ Խորհրդի որոշմամբ՝ հեռացվել ՀՀ փաստաբանական դպրոցից:

100. Ունկնդրի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝

1) դիմումը (բողոքը) կամ այլ գրավոր հաղորդումը.

2) ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի կողմից անմիջականորեն խախտում հայտնաբերելը.

3) ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատակազմի որևէ անդամի և (կամ) դասախոսի, փորձաշրջանը ղեկավարող անձի կողմից զեկուցագիր կամ հաղորդում ներկայացնելը.

4) ունկնդրի կողմից զեկուցագիր կամ հաղորդում ներկայացնելը.

5) զանգվածային լրատվամիջոցի հրապարակումը:

101. Կարգապահական վարույթ կարող է հարուցվել արարքի բացահայտումից ոչ ուշ, քան երեք ամսվա և կատարումից ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում՝ չհաշված ունկնդրի հիվանդության կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածը: Կարգապահական վարույթն իրականացվում է հարուցվելու պահից **երկու ամսվա** ընթացքում:

102. Ունկնդրի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցվում է Տնօրենի հրամանով: Եթե կարգապահական վարույթի իրականացման ընթացքում Տնօրենը գտնում է, որ առկա է ՀՀ փաստաբանական դպրոցից հեռացնելու հիմքը, ապա ներկայացնում է միջնորդություն Խորհրդին՝ Ունկնդրին ՀՀ փաստաբանական դպրոցից հեռացնելու վերաբերյալ: Միջնորդության հետ միաժամանակ, Խորհրդին է ներկայացվում կարգապահական վարույթի նյութերը: Խորհրդի կողմից Տնօրենի՝ ունկնդրին հեռացնելու մասին միջնորդությունը մերժելու դեպքում, եթե Խորհուրդը չի արձանագրել կարգապահական հիմքի բացակայության փաստը, Տնօրենը հրաման է ընդունում ունկնդրին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին՝ նկատողություն կամ խիստ նկատողություն հայտարարելու (կիրառելու) միջոցով:

103. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է Ունկնդրի արարքի մեջ Օրենքի, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև ՀՀ փաստաբանական դպրոցի իրավական այլ ակտերով (այդ թվում՝ Ունկնդիրների վարքագծի կանոնների) նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առկայությունը:

104. Եթե կարգապահական վարույթ հարուցելուց հետո պարզվում է, որ Ունկնդրի արարքի մեջ առկա չէ վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք, ապա վարույթը կարճվում է իրավախախտման բացակայության հիմքով:

105. Մինչև կարգապահական տույժի կիրառումը Ունկնդրից պետք է պահանջել գրավոր բացատրություն: Գրավոր բացատրություն ներկայացնելն Ունկնդրի իրավունքն է: Գրավոր բացատրություն ներկայացնելու դեպքում Ունկնդիրը պարտավոր է այդ բացատրությունը հանձնել ՀՀ փաստաբանական դպրոցին ծանուցման մեջ նշված ժամկետում:

106. Ունկնդրի նկատմամբ կիրառելի են հետևյալ կարգապահական տույժերը.

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.
- 3) հեռացում ՀՀ փաստաբանական դպրոցից:

107. Ունկնդիրը, կարգապահական տույժի կիրառմամբ կարող է հեռացվել ՀՀ փաստաբանական դպրոցից՝

1) Ունկնդիրների վարքագծի կարգապահական կանոնների կոպիտ խախտման (կոպիտ խախտումները նախատեսվում են Ունկնդիրների վարքագծի կանոններով) դեպքում, այդ թվում՝

ա. քննությունից առաջ կամ ընթացքում քննական առաջադրանքները կատարելուն ուղղված որևէ նյութ (քննական առաջադրանք, լուծման տարբերակ և այլն), անկախ նյութի արդյունավետությունից, մեկ այլ ունկնդրի փոխանցելու կամ հրապարակելու կամ որևէ կերպ քննությունը հանձնող ունկնդրին հասանելի դարձնելու դեպքում.

բ. ակադեմիական արդարությունն ու հավասարությունը խաթարող ոչ իրավաչափ գործողություններ կատարելու դեպքում, եթե դա ազդել է կամ կարող էր ազդել քննության արդյունքի վրա.

գ. ՀՀ փաստաբանական դպրոցի վարչական շենքում, այդ թվում՝ լսարանում, ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատակցի, դասախոսի, այլ Ունկնդրի նկատմամբ անպարկեշտ վարքագիծ դրսևորելու կամ բռնություն կիրառելու դեպքում.

դ. ՀՀ փաստաբանական դպրոցի բարի համբավը հրապարակային որևէ հարթակում արատավորելու դեպքում, որը դրսևորվել է մասնավորապես ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատակցի կամ դասախոսի նկատմամբ ծաղրանքով, վիրավորանքով կամ գրպարտությամբ.

2) խիստ նկատողություն հայտարարելուց հետո երկու ամսվա ընթացքում կրկին կարգապահական խախտում թույլ տալու դեպքում:

108. Խորհուրդը ունկնդրի հեռացման հարցը քննելիս ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

- 1) Ունկնդրին ՀՀ փաստաբանական դպրոցից հեռացնելու մասին.
- 2) կարգապահական վարույթը կարճելու մասին.
- 3) Տնօրենի միջնորդությունը մերժելու և կարգապահական վարույթը Տնօրենին

վերադարձնելու մասին՝ ունկնդրի պատասխանատվության հարցը լուծելու նպատակով:

109. Ունկնդիրը կարող է հրավիրվել Խորհրդի նիստին, եթե Խորհրդի նախագահը կամ Խորհրդի առնվազն երկու անդամ այդպիսի անհրաժեշտություն են տեսնում, ինչպես նաև այն դեպքում, երբ Ունկնդիրը կարգապահական վարույթի ընթացքում չի ներկայացրել բացատրություններ: Ունկնդրին Խորհրդի նիստի ծանուցումն ուղարկվում է էլեկտրոնային փոստի միջոցով: Ունկնդրի չներկայանալը՝ անկախ պատճառից, արգելք չէ հարցի քննարկման և որոշում կայացնելու համար:

110. Ունկնդիրը կարող է իր նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին որոշումը բողոքարկել դատարան որոշումը ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

XII. ՈՒՆԿՆԴՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄԸ

111. Ունկնդրի ուսուցման ծրագրերը պետք է համապատասխանեն փաստաբանական գործունեությամբ զբաղվելու համար անհրաժեշտ գիտելիքների պահանջներին:

112. ՀՀ փաստաբանական դպրոցում կրթական ծրագրերն իրականացվում են ինչպես առկա (ստացիոնար), այնպես էլ հեռավար (դիստանցիոն) կարգով: Ուսուցման կարգի առանձնահատկությունները և մանրամասները, այդ թվում՝ հաճախումների գրանցման, քննաշրջանի արդյունքների արձանագրման և հրապարակման, ընթացիկ քննությունների անցկացման և գնահատման, քննության արդյունքների բողոքարկման, միջին որակական գնահատականը որոշելու և փորձաշրջանի արդյունքներն ամփոփելու ընթացակարգերը, սահմանում է Տնօրենը:

113. ՀՀ փաստաբանական դպրոցում ուսուցումն իրականացվում է երկու փուլով՝ տեսական ուսուցում և գործնական ուսուցում (փորձաշրջան):

114. Իրավաբանի՝ առնվազն հինգ տարվա մասնագիտական ստաժ ունեցող ունկնդրի ուսուցումը, իրականացվում է պարզեցված ընթացակարգով, իսկ մնացած ունկնդիրները ուսուցումը՝ ընդհանուր ընթացակարգով:

115. Սույն կանոնադրության իմաստով իրավաբանի մասնագիտական ստաժ է համարվում բարձրագույն մասնագիտական (իրավաբանական, իրավագիտական) կրթություն ստանալուց հետո անձի մասնագիտական (իրավաբանական, իրավագիտական) ստաժը:

116. Ուսուցումը ընդհանուր ընթացակարգով իրականացվում է **12 (տասներկու) ամիս** տևողությամբ:

117. Պարզեցված ընթացակարգով ուսուցման տևողությունը սահմանվում է **6 (վեց) ամիս**:

118. Խորհրդի որոշմամբ ՀՀ փաստաբանական դպրոցում պարզեցված ընթացակարգով ուսուցման ծրագիրը կարող է տարբերակվել մյուս պարզեցված ընթացակարգով ուսուցում անցնող ունկնդիրների ծրագրից, հետևյալ ունկնդիրների համար՝

- 1) առնվազն տաս տարվա իրավաբանի մասնագիտական ստաժ ունեցող ունկնդրի համար.
- 2) առնվազն հինգ տարվա իրավաբանի մասնագիտական ստաժ և իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի աստիճան

ունեցող ունկնդրի համար:

119. Տնօրենը կարող է սահմանել ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված լրացուցիչ, այդ թվում՝ ունկնդիրների գիտելիքների գնահատման պայմաններ և չափանիշներ:

120. Ուսուցումը սկսվում է ընդունելության քննության արդյունքների ամփոփումից հետո՝ Տնօրենի հրամանով հայտարարված օրվանից:

121. Ունկնդիրը, կարող է հեռացվել ՀՀ փաստաբանական դպրոցից՝

1) ուսման վարձը պայմանագրով նախատեսված ժամկետում չվճարելու դեպքում, եթե թույլ է տվել առնվազն տասնհինգօրյա կետանց.

2) սույն կանոնադրությամբ և/կամ Ուսուցման կազմակերպման ընթացակարգով սահմանված՝

ա. տեսական ուսուցման փուլում՝ անհարգելի բացակայության, անբավարար առաջադիմության, ինչպես նաև ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի սահմանած ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված պայմանները չբավարարելու դեպքում.

բ. պահանջները չկատարելու դեպքում՝ գործնական ուսուցման փուլում.

3) սույն կանոնադրության 86-րդ կետում նշված ունկնդրի կարգավիճակի հետ անհամատեղելի փաստ ի հայտ գալու դեպքում.

4) սույն կանոնադրությամբ սահմանված այլ դեպքերում:

122. ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի կողմից ունկնդրի հեռացման հարցը կարող է ներկայացվել Խորհրդի քննարկմանը, մասնավորապես՝

1) Ունկնդրի կողմից տեսական ուսուցման փուլի անհատական բեռնվածության 20 (քսան), իսկ գործնական ուսուցման ընթացքում՝ 40 (քառասուն) տոկոսի չափով անհարգելի բացակայության, ինչպես նաև 60 (վաթսուն) տոկոսի չափով ընդհանուր բացակայության դեպքերում.

2) ակադեմիական արձակուրդի ժամկետը լրանալուց հետո մեկ ամսվա ընթացքում Ունկնդրի չներկայանալու դեպքում:

123. Սույն կանոնադրության 121-րդ կետում նշված դեպքում, Ունկնդիրը չի հրավիրվում Խորհրդի նիստին:

Տեսական ուսուցումը և փորձաշրջանի անցկացումը

124. ՀՀ փաստաբանական դպրոցում տեսական ուսուցումը կազմակերպվում է դասախոսությունների, գործնական (սեմինար) պարապմունքների, պրակտիկ աշխատանքների, խորհրդատվության, ուսումնական արդի այլ եղանակներով:

125. Արտակարգ դեպքերում՝ արտակարգ դրության, ռազմական դրության, համաճարակի (անմիջական սպառնալիքի կամ դրա կանխման) կամ արտակարգ բնույթ կրող այլ անկանխելի պատճառով անձանց տեղաշարժի կամ անմիջական շփումների սահմանափակումների դեպքում, ուսուցման երկու փուլերը կարող են իրականացվել հեռավար (դիստանցիոն) կարգով:

126. Փորձաշրջանի (**այսուհետ՝ նաև Գործնական ուսուցում**) անցկացման կարգը սահմանվում է սույն կանոնադրությամբ:

127. Գործնական ուսուցում անցնելը բոլոր ունկնդիրների համար պարտադիր է:

128. Գործնական ուսուցումը Ունկնդիրների, որպես ապագա փաստաբանի

գործնական հմտությունների ձևավորման նպատակով կազմակերպվող կրթություն է:

129. Գործնական ուսուցումը ներառում է՝ Դպրոցի կողմից կազմակերպվող փաստաբանի հմտություններ զարգացնող գործնական պարապմունքները (սիմուլացիոն դատավարություններ, մասնագիտական հմտություններ զարգացնող դասընթացներ, իրավաբանական կլինիկայում տարվող աշխատանքներ) և փորձաշրջանի ծրագրով նախատեսված գործնական առաջադրանքները:

130. Ունկնդիրը փորձաշրջանը կարող է անցնել ինչպես փաստաբանական գրասենյակում, այնպես էլ այն հաստատությունում (**այսուհետ՝ հաստատություններ**), որտեղ հնարավոր կլինի իրականացնել գործնական ուսուցման ծրագրով նախատեսված առաջադրանքները, իսկ փաստաբան-ղեկավար կարող է հանդիսանալ առնվազն 5 (հինգ) տարվա փաստաբանական ստաժ ունեցող փաստաբանը (այս ժամանակահատվածում չի ներառվում փաստաբանի արտոնագրի գործողությունը կասեցված լինելու ժամանակահատվածը):

131. Փաստաբան ղեկավարի կամ ղեկավարի համապատասխանության հարցը որոշվում է Տնօրենի կողմից: Մույն կետով սահմանված գործառույթն իրականացնելիս Տնօրենն իրավունք ունի ունկնդրից պահանջել անհրաժեշտ փաստաթղթեր (տեղեկատվություն): Սահմանված ժամկետում ունկնդրի կողմից փորձաշրջան անցնելու վայրի և փորձաշրջանի ղեկավարի մասին համապատասխան տեղեկատվություն չներկայացնելու դեպքում, Դպրոցը նշանակում է փորձաշրջանի անցկացման վայրն ու փորձաշրջանի ղեկավարին, որը պարտադիր է ունկնդրի համար:

132. Փորձաշրջանի ընթացքում, Դպրոցի տնօրենի կողմից սահմանված պարբերականությամբ և ձևաչափով, ունկնդիրը ներկայացնում է փորձաշրջանի ղեկավարի կողմից հաստատված փորձաշրջանի ընթացիկ հաշվետվություն: Փորձաշրջանի համակարգողն իրավասու է ցանկացած ժամանակ ստուգել փորձաշրջանի ծրագրի կատարման ընթացքը, պահանջել գրավոր փաստաթղթեր և այլ նյութեր՝ պահպանելով փաստաբանական և (կամ) այլ գաղտնիքը, ինչպես նաև տնօրենի հրամանով գործուղվել փորձաշրջանի անցկացման վայր:

133. Ունկնդրի կողմից փորձաշրջան անցնելու ողջ ժամանակահատվածում փորձաշրջանի անցկացման նկատմամբ հսկողությունն իրականացնում է փորձաշրջանի համակարգողը:

134. Փորձաշրջանի համակարգողը ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի կողմից նշանակված անձն է: Փորձաշրջանի համակարգող կարող է նշանակվել ինչպես ՀՀ փաստաբանական դպրոցի դասախոսը, այնպես էլ՝ այլ անձ: Փորձաշրջանի համակարգողը կարող է միաժամանակ հսկողություն իրականացնել մի քանի ունկնդիրների նկատմամբ: Փաստաբան-ղեկավարը կամ ղեկավարը պարտավոր է ունկնդրի փորձաշրջանը կազմակերպել Խորհրդի կողմից սահմանված ծրագրերին համապատասխան և փորձաշրջանի ավարտից հետո տրամադրել սահմանված ձևի դրական կամ բացասական գրավոր կարծիք:

135. Փորձաշրջանի փուլի ավարտին փաստաբանի հմտություններ զարգացնող գործնական պարապմունքներից 40 (քառասուն) տոկոսի չափով անհարգելի բացակայության դեպքերում, ունկնդիրը չի մասնակցում հարցազրույցի փուլին՝ համարվելով փորձաշրջանը չանցած, ինչն իր հերթին հիմք է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի կողմից ունկնդրի հեռացման հարցը Խորհրդի

քննարկմանը ներկայացնելու համար:

136. Փորձաշրջանի արդյունքների ամփոփումն անցկացվում է փորձաշրջանի ծրագրով սահմանված առաջադրանքների կատարումը ստուգելու և հարցազրույցի միջոցով:

137. Փորձաշրջանի ծրագրով սահմանված առաջադրանքների կատարումը ստուգելու փուլում ունկնդրի ներկայացրած փաթեթից Փորձաշրջանի համակարգողի կողմից ստուգվում են՝

1) փորձաշրջանի ծրագրում սահմանված առաջադրանքների փաստացի կատարված ծավալները,

2) Տնօրենի կողմից սահմանված ձևի հավաստագրում ամրագրված տվյալները, այն է՝ ունկնդրի՝ կոնկրետ վայրում փորձաշրջան անցնելու, պրակտիկայի ծրագրով սահմանված ծավալներն ապահովելու, ինչպես նաև կոնկրետ անձի՝ տվյալ ունկնդրի փորձաշրջանի ղեկավար լինելու հանգամանքը,

3) Տնօրենի կողմից հաստատված համապատասխան գրքույկում լրացված ունկնդրի կողմից փորձաշրջանի ծրագրով սահմանված առաջադրանքների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը,

4) փաստաբան-ղեկավարի կամ ղեկավարի կողմից տրամադրված գրավոր կարծիքի առկայությունը:

138. Փաթեթը ներկայացվում է առաջադրանքների վերջնական թղթային տարբերակներով, հայերենով՝ համակարգված և կարված վիճակում:

139. Սույն կանոնադրության 138-րդ կետում սահմանված պահանջները չբավարարելու դեպքում չի ընդունվում ունկնդրի ներկայացրած փաթեթը, և վերջինիս հնարավորություն է ընձեռվում 3-օրյա ժամկետում արձանագրված թերացումները շտկելու և փաթեթը կրկին ներկայացնելու համար:

140. Նշված ժամկետում փաթեթը չներկայացնելու կամ թերի ներկայացնելու դեպքում ունկնդիրը չի մասնակցում հարցազրույցի փուլին՝ համարվելով փորձաշրջանը չանցած:

141. Փորձաշրջանի արդյունքների ամփոփումից (հարցազրույցից) առաջ յուրաքանչյուր ունկնդրի համար փորձաշրջանի համակարգողը տալիս է փորձաշրջանի ընթացքի մասին եզրակացություն, որտեղ նշվում է ղեկավարի համառոտ կարծիքը, փորձաշրջանի ընթացքում կազմակերպված միջոցառումներին մասնակցելու վերաբերյալ տեղեկատվությունը:

142. Հարցազրույցի փուլի անցկացման համար սահմանվում է ժամանակացույց, որը հրապարակվում է հարցազրույցից առնվազն մեկ շաբաթ առաջ: Բացառիկ դեպքերում Տնօրենի հրամանով կարող է սահմանվել պահուստային օր, որը կարող է նախատեսվել ուսումնական պլանով սահմանված ժամկետներից դուրս:

143. Հարցազրույցը փորձաշրջանի ծրագրով նախատեսված առաջադրանքներից բխող, փաստաբանական գործունեության մեջ կարևորվող գիտելիքի, կարողությունների ստուգումն է՝ ունկնդրի կողմից ներկայացված աշխատանքների ստուգման և դրանց հիման վրա տրված հարցերի միջոցով:

144. Հարցազրույցն անցկացնում է Տնօրենի կողմից ստեղծված հանձնաժողովը (**այսուհետ՝ Փորձաշրջանի հանձնաժողով**): Փորձաշրջանի հանձնաժողովն իրավասու է ունկնդրի կողմից մասնագիտական դասընթացներին (սեմինարներին) մասնակցությունը կամ կատարած այլ աշխատանքները հաշվարկել որպես փորձաշրջանի ծրագրի որոշակի ժամաքանակ:

145. Հարցազրույցի ընթացքը կարող է տեսաձայնագրվել:

146. Հարցազրույցի արդյունքների (դրական՝ «անցած», բացասական՝ «չանցած») վերաբերյալ կազմվում է տեղեկագիր, որը ստորագրում են Փորձաշրջանի հանձնաժողովի բոլոր անդամները:

147. Պահուստային օրը չներկայանալու դեպքում ունկնդիրը համարվում է փորձաշրջանի փուլը չանցած:

148. Փորձաշրջանի արդյունքների ամփոփմամբ ունկնդիրը համարվում է փորձաշրջանն անցած կամ չանցած:

149. Ունկնդիրը համարվում է փորձաշրջանը չանցած, եթե հարցազրույցի ընթացքում ստացել է բացասական (չանցած) գնահատական կամ առկա է սույն կանոնադրության 135-րդ կամ 140-րդ կամ 150-րդ կետի հիմքը:

150. Փորձաշրջանի հանձնաժողովն իրավասու է նշանակել բացասական գնահատական, եթե՝

1) ունկնդրի կատարած աշխատանքներում և (կամ) հարցերին տրված պատասխաններում առկա են էական սխալներ.

2) ունկնդիրը չի տիրապետում (չի կարողանում հստակ ներկայացնել) նյութին.

3) ունկնդիրը չի կարողանում հիմնավորել իր դիրքորոշումը:

151. Բացասական գնահատականի դեպքում կազմվում է անհատական որոշում, որտեղ նշվում են ունկնդրի տվյալները և բացասական գնահատման պատճառները:

152. Փորձաշրջանի հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել Տնօրենին՝ արդյունքների հրապարակման օրվանից 3 (երեք) օրվա ընթացքում:

153. Տնօրենը բողոքարկման արդյունքում կայացնում է որոշում՝ 7 (յոթ) օրվա ընթացքում:

154. Փորձաշրջանի արդյունքների ամփոփման ավարտին, ինչպես նաև փորձաշրջանը չանցած համարվելու դեպքում փորձաշրջանի համակարգողը կազմում է եզրակացություն՝ ունկնդրի փորձաշրջանն անցած կամ չանցած համարվելու վերաբերյալ:

155. Փորձաշրջանը անցած չհամարվելու դեպքում ունկնդրին չի տրամադրվում հավաստագիր և նրա ուսման համար վճարած վարձավճարը չի վերադարձվում: Որակավորման քննություններին մասնակցելու իրավունքից զրկված ունկնդիրն իրավունք ունի անմիջապես հաջորդող փորձաշրջանի ընթացքում ևս մեկ անգամ ընդհանուր կարգով անցնել փորձաշրջան՝ Խորհրդի կողմից սահմանված վճարումը կատարելու պայմանով, եթե այդ մասին մեկ ամսվա ընթացքում գրավոր տեղեկացնում է Տնօրենին:

156. Տնօրենը փորձաշրջանը չանցած ունկնդրի՝ ՀՀ փաստաբանական դպրոցի հեռացնելու հարցը ներկայացնում է Խորհրդին, եթե՝

1) Ունկնդիրը սույն կանոնադրության 155-րդ կետում նշված մեկ ամսվա ընթացքում Տնօրենին գրավոր ձևով չի տեղեկացրել անմիջապես հաջորդող փորձաշրջանի ընթացքում ևս մեկ անգամ ընդհանուր կարգով փորձաշրջան անցնելու պարտականություն ստանձնելու մասին.

2) սույն կանոնադրության 155-րդ կետում նշված անմիջապես հաջորդող փորձաշրջանի արդյունքներով ունկնդիրը ստացել է բացասական եզրակացություն:

157. ՀՀ փաստաբանական դպրոցի կրթական ծրագրերով ուսումնառությունը սահմանված կարգով ավարտած ունկնդրին տրամադրվում է ՀՀ փաստաբանական դպրոցի ավարտական փաստաթուղթ՝ հավաստագիր:

XIII. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

158. Որակավորման քննությունը փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու միասնական քննությունն է, որին մասնակցելու իրավունք ունեն միայն ՀՀ փաստաբանական դպրոցում համապատասխան ուսուցում անցած և ՀՀ փաստաբանական դպրոցի ավարտական փաստաթուղթ ունեցող ունկնդիրները:

159. ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդիրների որակավորման քննություններն անցկացնում է ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը: ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի աշխատանքներին նյութական, տեխնիկական և անհրաժեշտ այլ աջակցություն է ցուցաբերում ՀՀ փաստաբանական դպրոցը: ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդն ընդունում է որոշում, որով էլ սահմանվում են որակավորման քննության չափանիշները (ուղենիշները), ինչպես նաև որակավորման քննության անցկացման հետևյալ ձևերից մեկը կամ մի քանիսը՝ հարցաշարեր, թեստեր, խնդիրներ, գործնական աշխատանքներ (բողոք, հայցադիմում և այլն):

160. Որակավորման քննություններն անցկացվում է Օրենքով, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի կողմից:

161. Որակավորման քննության կազմակերպման և անցկացման կարգը սահմանում է ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը:

162. Որակավորման քննությունները չհանձնած ունկնդիրը վերստին որակավորման քննություն հանձնելու համար պարտավոր է ՀՀ փաստաբանական դպրոցում անցնել հատուկ ծրագրով ուսուցում: Երկրորդ անգամ որակավորման քննություններ չհանձնած ունկնդիրը վերստին կարող է մասնակցել որակավորման քննությանը ՀՀ փաստաբանական դպրոցում ընդհանուր հիմունքներով կրկին ուսուցում անցնելու դեպքում:

XIV. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

163. Փաստաբանների վերապատրաստման կրթական ծրագրերը իրականացվում են փաստաբանական գործունեությամբ զբաղվող փաստաբանների համար կրթական և/կամ հմտությունների պահանջմունքների բավարարման նպատակով:

164. ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից կազմակերպվող վերապատրաստման համար գանձվող վճարի չափը և կարգը սահմանում է Խորհուրդը:

XV. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ

165. Խորհրդի որոշմամբ անկախ աուդիտորը նվազագույնը տարին մեկ անգամ պետք է իրականացնի ՀՀ փաստաբանական դպրոցի ֆինանսական

գործունեության աուդիտ (հերթական աուդիտ):

166. ՀՀ փաստաբանական դպրոցի աուդիտը չի կարող իրականացվել անընդմեջ նույն անձի (աուդիտորի) կողմից:

167. Խորհրդի որոշմամբ կարող է անցկացվել նաև արտահերթ աուդիտորական ստուգում:

XVI. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

168. ՀՀ փաստաբանական դպրոցը յուրաքանչյուր տարի պարտավոր է օրենքով սահմանված կարգով և ժամկետում հրապարակել հաշվետվություն իր գործունեության մասին:

169. ՀՀ փաստաբանական դպրոցը պարտավոր է սույն կանոնադրությամբ նախատեսված շահառուների կամ իրավասու պետական մարմինների պահանջով հնգօրյա ժամկետում նրանց տրամադրել իր կանոնադրության, ինչպես նաև կանոնադրությունում կատարված լրացումների և փոփոխությունների պատճենները: Նշված փաստաթղթերն այդ անձանց առաջին անգամ տրամադրվում են անվճար:

XVII. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԳՈՒՅՔԸ, ԴՐԱ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

170. ՀՀ փաստաբանական դպրոցի սկզբնական միջոցներն են ՀՀ փաստաբանների պալատի կողմից ստեղծման պահին փոխանցված նյութական և (կամ) ֆինանսական միջոցները:

171. ՀՀ փաստաբանական դպրոցի գույքը տնօրինում է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

172. ՀՀ փաստաբանների պալատի կողմից ՀՀ փաստաբանական դպրոցին հանձնված գույքը ՀՀ փաստաբանական դպրոցի սեփականությունն է: ՀՀ փաստաբանական դպրոցն այդ գույքը կարող է օգտագործել միայն իր կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

173. ՀՀ փաստաբանական դպրոցի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

- 1) ՀՀ փաստաբանների պալատի ներդրումը,
- 2) ֆիզիկական և իրավաբանական անձանց, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների, նվիրատվությունները և նվիրաբերությունները, դրամական մուտքերը ՀՀ պետական բյուջեից,
- 3) դրամաշնորհները,
- 4) դիմորդներից ստացած վճարները,
- 5) փաստաբաններից և ունկնդիրներից ստացված վերապատրաստման կամ ուսման վճարը,
- 6) ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից իրականացված կրթական գործունեությունից ստացված եկամուտները,
- 7) ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,

8) հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից,

9) օրենքով չարգելված այլ միջոցներ:

174. ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենն ազատ է ինքնուրույն տնօրինել ՀՀ փաստաբանական դպրոցի՝ մեկ գործարքի մասով նվազագույն աշխատավարձի հազարապատիկը չգերազանցող ֆինանսական միջոցները, ՀՀ փաստաբանական դպրոցի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով, այդ թվում՝ ձեռք բերել գույք, վճարել ծառայությունների և/կամ աշխատանքների դիմաց՝ հաշվի առնելով Խորհրդի կողմից հաստատված բյուջեն:

175. Օրենքով և սույն կանոնադրությամբ իր խնդիրներն իրագործելու համար ՀՀ փաստաբանական դպրոցը մասնավորապես կատարում է՝

1) աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրան հավասարեցված այլ վճարումների (այդ թվում՝ հարկերի և պարտադիր վճարների) ծախսեր,

2) դասախոսների կողմից ծառայությունների մատուցման վճարմանն ուղղված ծախսեր,

3) կոմունալ վճարումների գծով ծախսեր,

4) փոստային և հեռահաղորդակցման ծառայությունների ծախսեր,

5) գրասենյակային և տեղեկատվական բնույթի ծախսեր,

6) տրանսպորտային և ներկայացուցչական ծախսեր,

7) այլ ծառայությունների գծով ծախսեր,

8) ապրանքանյութական պաշարների գծով ծախսեր,

9) վերանորոգման աշխատանքների գծով ծախսեր,

10) միջազգային համագործակցության գծով ծախսեր,

11) ընդունելության և ընթացիկ քննությունների կազմակերպման գծով ծախսեր,

12) որակավորման քննությունների կազմակերպման գծով ծախսեր,

13) ներքին ծրագրերի իրագործման գծով ծախսեր:

176. ՀՀ փաստաբանական դպրոցի բյուջեի ուղղություններով չնախատեսված խոշոր գործարք կնքելու (կատարելու), այն է՝ ՀՀ փաստաբանական դպրոցի գույքը վաճառելու կամ ձեռք բերելու կամ այլ գործարք կնքելու (կատարելու) դեպքում, եթե գույքի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի հազարապատիկը (այսուհետ՝ Խոշոր գործարք), մինչև գործարքի կատարումը Տնօրենը պետք է նախապես ստանա ՀՀ փաստաբանական դպրոցի խորհրդի համաձայնությունը (որոշումը), բացառությամբ ստացվող նվիրատվության (նվիրաբերության) և դրամաշնորհի գործարքների (որոնք կարող են կնքվել առանց Խորհրդի համաձայնության): Ընդ որում, եթե Խորհուրդը քննարկում է նոր գույք ձեռք բերելու համաձայնություն տալու հարց, ապա խորհրդին զլխավոր հաշվապահը ներկայացնում է համապատասխան ապրանքի գնի և/կամ տեխնիկական նկարագրի վերաբերյալ առնվազն 2 (երկու) անձից (մատակարարից) ստացված գնային առաջարկներ, բացառությամբ երբ՝ (1) առաջարկվել է կոնկրետ հատկանիշներով (գտնվելու վայր, մակնիշ և այլ) կամ (2) երկրորդական շուկայից գույք ձեռք բերելու հայտ կամ (3) գնման ենթակա գույքի հետ կապված հնարավոր չէ այլ ողջամիտ առաջարկ ստանալ կամ (4) ներկայացվել է մեծ միջոցառում իրականացնելու հայտ, որի ընդհանուր բյուջեն գերազանցելու է մեկ միլիոն ՀՀ դրամը: Գույք ձեռք բերելու վերաբերյալ Խորհրդի համաձայնության դեպքում,

Տնօրենն իրավունք ունի առավել մատչելի տարբերակով գույք ձեռք բերել առանց Խորհրդի լրացուցիչ որոշման: Եթե ներկայացվել է ՀՀ փաստաբանական դպրոցի՝ մեկ միլիոն ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքը գերազանցող գույք վաճառելու հարց, ապա գլխավոր հաշվապահը Խորհրդին պետք է ներկայացնի գույքի գնահատման վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ: Գլխավոր հաշվապահը կարող է նաև Խորհրդին ներկայացնել գնորդի մասին տեղեկություններ, եթե հավանական գնորդը հայտնի է: Սույն կետում նշված կարգը վերաբերում է նաև նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող ծառայություններին և աշխատանքներին:

177. Նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող միջոցառում (ծրագիր, գործարք) կազմակերպելու (կատարելու) համար Խորհրդի լրացուցիչ որոշում չի պահանջվում, եթե՝

1) նշված միջոցառումը (ծրագիրը, գործարքը) նախատեսված է ՀՀ փաստաբանական դպրոցի բյուջեով, որտեղ սահմանված է ծախսվող գումարի առավելագույն չափը, կամ

2) նշված միջոցառումը (ծրագիրը, գործարքը) նախատեսված է ՀՀ փաստաբանական դպրոցին տրամադրվող դրամաշնորհային ծրագրով, կամ

3) նշված միջոցառումը (ծրագիրը, գործարքը) նախատեսված է ՀՀ փաստաբանական դպրոցին տրամադրվող նվիրատվության (նվիրաբերության) գործարքով:

178. Խորհուրդն իրավունք ունի ծանոթանալու ՀՀ փաստաբանական դպրոցի բոլոր փաստաթղթերին: Սույն կետում նշված հարցով Խորհրդի որոշումը պետք է պարունակի նաև փաստաթղթերին ծանոթանալու կարգը և ժամկետները: Փաստաթղթերի հետ կարելի է ծանոթանալ միայն ՀՀ փաստաբանական դպրոցի գտնվելու վայրում:

179. Խորհրդի նախագահը իրավասու է ծանոթանալ ՀՀ փաստաբանական դպրոցի բոլոր փաստաթղթերին, այդ թվում՝ ֆինանսատնտեսական փաստաթղթերին, ստանալ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

180. Բացառությամբ սույն կանոնադրության 178-րդ և 179-րդ կետերում նշված, ինչպես նաև Խորհրդի օրակարգում ընդգրկված հարցերի քննարկման անհրաժեշտությամբ պայմանավորված դեպքերի, Խորհրդի անդամն իրավունք չունի ծանոթանալու ՀՀ փաստաբանական դպրոցի ֆինանսատնտեսական փաստաթղթերին (անձնական, հաշվապահական, հարկային գաղտնիք պարունակող տվյալներին): Սույն կետում նշված կանոնը չի սահմանափակում Խորհրդի անդամին ստանալու տեղեկություններ ՀՀ փաստաբանական դպրոցի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամի հարցմանը ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատակազմը պարտավոր է պատասխանել հինգ օրյա ժամկետում, բացառությամբ այն դեպքերի, երբ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է, ավելի երկար ողջամիտ ժամկետ:

XVIII. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

181. ՀՀ փաստաբանական դպրոցը չի կարող վերակազմակերպվել:

182. ՀՀ փաստաբանական դպրոցի լուծարումը հանգեցնում է դրա դադարմանը՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

183. ՀՀ փաստաբանական դպրոցը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:

184. ՀՀ փաստաբանական դպրոցը կարող է լուծարվել, եթե՝

1) ՀՀ փաստաբանական դպրոցի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար, և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ.

2) իր գործունեությամբ ՀՀ փաստաբանական դպրոցը շեղվել է կանոնադրությամբ նախատեսված նպատակներից.

3) հնարավոր չէ հասնել ՀՀ փաստաբանական դպրոցի նպատակներին և կատարել այդ նպատակների փոփոխություններ կամ լրացումներ.

4) ՀՀ փաստաբանական դպրոցի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները.

5) ՀՀ փաստաբանական դպրոցը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն.

6) ՀՀ փաստաբանական դպրոցը ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ:

185. Դատարանի կողմից ՀՀ փաստաբանական դպրոցի լուծարման մասին որոշում ընդունելուց հետո ՀՀ փաստաբանական դպրոցի խորհուրդը նշանակում է լուծարման հանձնաժողով (լուծարող) և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և «Հիմնադրամների մասին» օրենքի համաձայն՝ սահմանում է լուծարման կարգը և ժամկետները:

186. Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում ՀՀ փաստաբանական դպրոցի գործերի կառավարման լիազորությունները: Լուծարվող ՀՀ փաստաբանական դպրոցի անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

187. Լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարման հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա:

188. Լուծարման հանձնաժողովն <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություն է զետեղում հիմնադրամի լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին: Այդ ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից՝ սկսած լուծարման մասին հրապարակման պահից, որը համարվում է ՀՀ փաստաբանական դպրոցի լուծարման գործընթացի սկիզբ:

189. Լուծարման հանձնաժողովն իրականացնում է գույքի վերազնահատումը, միջոցներ է ձեռնարկում պարտատերերի հայտնաբերման և դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ, ինչպես նաև տեղեկացնում է պարտատերերին ՀՀ փաստաբանական դպրոցը լուծարման մասին:

190. Լուծարման ընթացքում ՀՀ փաստաբանական դպրոցն իրավունք ունի կնքել նոր գործարքներ և ստանձնել նոր պարտավորություններ՝ միայն իր պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ գործունեությունն ավարտելու անհրաժեշտության դեպքում:

191. Պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետն ավարտվելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է միջանկյալ լուծարման հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող հիմնադրամի գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին:

192. Միջանկյալ լուծարման հաշվեկշիռը հաստատում է Խորհուրդը:

193. Միջանկյալ լուծարման հաշվեկշռի հաստատվելուց հետո, եթե լուծարվող հիմնադրամի ունեցած դրամական միջոցներն անբավարար են պարտատերերի պահանջները բավարարելու համար, լուծարման հանձնաժողովը, Օրենքով սահմանված կարգով, հրապարակային սակարկություններով իրականացնում է ՀՀ փաստաբանական դպրոցի գույքի վաճառքը:

194. Լուծարման հանձնաժողովը լուծարվող ՀՀ փաստաբանական դպրոցի պարտատերերին վճարումներ է կատարում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ և միջանկյալ լուծարման հաշվեկշռին համապատասխան՝ սկսած դրա հաստատման պահից:

195. Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատվելու պահին ՀՀ փաստաբանական դպրոցը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է ՀՀ փաստաբանական դպրոցի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին (ՀՀ փաստաբանների պալատի կողմից ստեղծվող ոչ առևտրային այլ կազմակերպությանը):

196. ՀՀ փաստաբանական դպրոցի գույքի ամբողջական բաշխումն իրականացնելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ և ներկայացնում է ներկայացնում Խորհրդի հաստատմանը: Լուծարման հանձնաժողովը ի Խորհրդի հաստատած լուծարման հաշվեկշիռը ներկայացնում է դատարանի հաստատմանը:

197. Լուծարման հանձնաժողովը հաստատված լուծարման հաշվեկշիռն օրենքով սահմանված մյուս փաստաթղթերի հետ ներկայացնում է իրավաբանական անձանց պետական ռեգիստր ՀՀ փաստաբանական դպրոցի լուծարման պետական գրանցում կատարելու համար:

198. ՀՀ փաստաբանական դպրոցի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած՝ պետական գրանցման պահից:

199. Խորհրդի կողմից լուծարման հետ կապված սահմանված իր լիազորությունները երկամսյա ժամկետում (համապատասխանաբար դատարանի կողմից որոշման ընդունման, լուծարման հանձնաժողովի կողմից լուծարման միջանկյալ հաշվեկշռի և լուծարման հաշվեկշռի ներկայացման պահից) չկատարելու դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը ՀՀ փաստաբանական դպրոցի լուծարման հետ կապված լիազորությունների իրականացման նպատակով երկամսյա ժամկետում նշանակում է ժամանակավոր խորհուրդ:

* * * * *